ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից հանել պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման:

2. <u>Դատական ծախսերի մասով Դատարանի իրավական վերլուծությունները և պատճառաբանությունները.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ *դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հայցն առանց քննության թողնելու կամ **գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա**, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:*

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցադիմումի համար Հայցվորների կողմից վճարվել է սահմանված կարգին և չափին համապատասխան պետական տուրքի գումար, ուստի, հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182, 183, 110, 191 և 192 հոդվածներով՝ Դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ըստ հայցի <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակ>>-ում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և ՀՀ ֆինանսների նախարարությանը <<Ծին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից հանել պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ **Հայցվորների կողմից պահանջներից հրաժարվելու հիմքով**:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Որոշումը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am